16 հոկտեմբերի 2014 թվականի N 1140 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 334-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանցի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Կիրանցի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 334-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 3-րդ կետի «ա» ենթակետում «24.39» թիվը փոխարինել «24.16» թվով.

2) որոշման N 4 հավելվածի «որից չմասնավորեցվող» սյունակի «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր» տողում «0.88» թիվը փոխարինել «0.65» թվով, իսկ «Ընդամենը» տողում «24.39» թիվը՝ «24.16» թվով.

3) որոշման N 6 հավելվածում՝

ա. «Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր» այունակի «119-029» ծածկագրով տողում «0.4» թիվը փոխարինել «0.17» թվով.

բ. 119-030 պարբերությունից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝ առանց մասնավորեցման սահմանափակման.

«

119-033		0.23							ավազակոպճային խառնուրդի հանքավայր

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ